

Մ աշտոցի Ա րձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ
WWW.SOURPHAGOP.ORG (17-րդ տարի)

Այս թիւով.....

Խմբագրական՝ Վերամուտ 38 Էջ 2

Սեպտեմբեր ամսուան բացատրական տօնացոյց: Էջ 3-5

Գիտէի՞ թէ
Եկեղեցական Բառարան
Խաչվերաց
Սուրբ Գեորգ Զօրավար
Նիկիոյ Ժողով
Նաւակատիք

Պահուած Բառ Էջ 6

Ո՞րն է ճիշդ պատասխանը Էջ 7-10

2016-17 Տարեշրջանի Ամապերջի հանդէս

Հաղորդագրութիւն Էջ 11-14
Աւարտականի խօսք Էջ 15

Վերամուտ 2017-18 Էջ 16

Ամսուան Համարը

«Ձգեցէք որ մանուկները ինծի գան,
արգելք մի ըլլաք անոնց, որովհետեւ
այդպիսիներուն է Աստուծոյ
արքայութիւնը»:

Աւետարան ըստ Մարկոսի 10.14

Սեպտեմբեր 2017 (ԻԵ տարի թիւ 1)



Կ... ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՅ

Խաչքարի Հեղինակ՝
Ժողովրդական Վարպետ
Ռուբեն Նալբանդյան

Հաւատք

Կրօն

Եկեղեցի

Լեզու

Մշակոյթ

Վերամուտ 38

Մեր ժողովուրդի ամենէն կարեւոր հարստութիւնը մեր բարոյական դիմագիծին առողջութիւնն է եւ երբ մեր նոր սերունդը հայ քրիստոնէական դաստիարակութեամբ եւ մեր մայրենի եկեղեցւոյ մաքուր կաթով չի սնանիր, կը նշանակէ թէ արդէն բարոյական այլասերումի վտանգը կը սպառնայ մեզի:

Պատմութիւնը կը վկայէ թէ՛ աշխարհասփիւռ մեր գաղութներուն երկարակեցութիւնը կախեալ է ոչ թէ տուեալ գաղութի նիւթական պայմաններէն, այլ անոր հոգեւոր արժէքներէն ու բարոյական սկզբունքներէն:

1980 Սեպտեմբերի 14-ին ծնունդ առած Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցը կը պատրաստուի իր 38-րդ յաջորդական տարեշրջանին:

«Ձեզեք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը»:

Յիսուսի այս խօսքերը պէտք է ըլլան հիմը Հայաստանեայց Եկեղեցւոյ մտապատկերին, մանաւանդ Գանատայի մէջ՝ երբ պետութեան կողմէ վարժարաններու մէջ, հայ կրօնական դաստիարակութեան սահմանափակումին հետեւանքով, եկեղեցիներուն համար կենսական կը դառնայ հայ քրիստոնէական դաստիարակութիւն փոխանցել նոր սերունդին, հիմնականօրէն Կիրակնօրեայ Դպրոցներու միջոցով:

«Մաշտոցի Արձագանգ»ի 25-ամեակին ընդմէջէն պիտի շարունակենք մեսրոպատառ գրութիւններ ներկայացնել մեր աշակերտներուն, մանաւանդ համացանցին վրայ: Մեր կայքէջը, www.sourphagop.org-ը իր 17-րդ տարին պիտի ամբողջացնէ:

Այս տարի եւս, օգտագործելով զանազան միջոցներ, պիտի շարունակենք սորվեցնել մեր աշակերտներուն.

- Հայ բարքեր եւ կենցաղ
- Հայկական տօներ ու սովորութիւններ
- Երգեր եւ շարականներ
- Հայերէն Աստուածաշունչ բանալ եւ կարդալ
- Հայ եկեղեցւոյ պատմութիւն
- Ձեռային աշխատանքներ:

Այս բոլորը՝ Հայ Քրիստոնէայ նկարագիր մը կերտելու համար:

Թող Բարձրեալն Աստուծոյ աչքն ու աջը հովանի ու առաջնորդ ըլլան Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցին, որպէսզի մեր ժողովուրդի նոր սերունդի զաւակները «պարարտ հողի մէջ աճելով պտուղ տան, մէկի տեղ երեսուն, մէկի տեղ վաթսուն, կամ մէկի տեղ հարիւր»:

«Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը, Աստուծոյ սերը եւ Սուրբ Հոգիին հաղորդութիւնը մեր բոլորին հետ ըլլան: Ամէն»:

Սեպտեմբեր ամսուան բացատրական տօնացոյց

Բշ. 4	Ս. Անդրէ Զօրավար
Ուր. 8	Տօն Ծննդեան Ս. Աստուածածնի յԱննայէ
Շբթ. 9	Նիկիոյ Ս. Ժողովի 318 Հայրապետները
Կիր. 10	Բարեկենդան Ս. Խաչի Պահոց
Շբթ. 16	Նաւակատիք Սուրբ Խաչի
Կիր. 17	Տօն Վերացման Ս. Խաչին (Խաչվերաց)
Բշ. 18	Յիշատակ Մեռելոց
Եշ. 21	Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան օր
Շբթ. 30	Սուրբ Գեորգ Զօրավար

Պահքի Օրեր: 1, 6, 8, 11, 12, 13, 14, 15, 20, 22, 25, 26, 27, 28, 29

Գիտէի ը թէ

1. Խաչվերացին օրը, ռեհանով զարդարուած խաչով տեղի կ'ունենայ Թափօր-Անդաստանը:
2. Հայց. Եկեղեցւոյ սովորութիւններէն է Խաչվերացի տօնին օրինել զանազան միրգեր:
3. Պօղոս Առաքեալ կը գրէ. «Գալով ինծի քաւ լիցի եթէ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն զատ ուրիշ բանով պարծենամ»:
4. Հայց. Եկեղեցին ունի Ս. Խաչի 3 տօներ եւս. Գիւտ Խաչի, Վարագայ խաչ, Երեւման խաչ:
5. Ս. Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի վերամուտը ամէն տարի Խաչվերացին տեղի կ'ունենայ:

Եկեղեցական Բառարան

Ա ա Ակն Խաչի Խաչին կեդրոնն է ուր չորս թելերը կը միանան: Մեր խաչերուն մէջ, սովորաբար, հոն արժեքաւոր քար մը կամ անարժեք նմանութիւն մը դրուած կ'ըլլայ: Կրնայ նաեւ մասունք մը զետեղուած ըլլալ: Խաչերը օճելու արարողութեան մէջ օճելու հինգ տեղերէն առաջինն է Ակն Խաչին:

Բ բ Բանկալ Ժողովուրդը բանկալ կը կոչէ եկեղեցւոյ արտաքին դուռէն ներս մտած ատեն, տաճարին մեծ դուռը չհասած անցքին մէկ կամ երկու կողմերը՝ ուր մոմ կը ծախուի, հոգեհանգիստի արձանագրութիւններ կամ նուիրատուութիւն կ'ըլլայ: Հոն կրնայ վաճառուիլ նաեւ օրացոյց կամ այլ հոգեւոր գրականութիւն:

Բուն-Խաչի Այսպէս կը կոչուի չորս թելերէն այն՝ որ ուղղահայեաց գծին ստորին մասը կը կազմէ եւ առանձին կ'օճուի խաչ օճելու արարողութեան ընթացքին: Բուն Խաչի կրնայ կոչուիլ նաեւ այն մասը՝ որ խաչի վարի թելին ներքեւը կցուած է ձեռաց խաչերուն մէջ եւ բռնելու կը ծառայէ եւ որ խաչէն դուրս խաչին կօթը կը նկատուի: Այս մասին վրայ օճում չ'ըլլար:

Գ գ Գաւիթը եկեղեցւոյ արեւմտեան բաժինն է որ տաճարէն բաժնուած է պատով ու դուռով, որուն մէջ կը կենային ապաշխարողները որոնք պատրաստ չէին հաղորդութիւն ստանալու: Երբ Բուն Պատարագի ընթացքին, եւ «Քրիստոս ի մէջ մեր»-էն առաջ սարկաւազը կ'ըսէ «եւ որք ոչ էք կարողք հաղորդիլ աստուածային խորհրդոյս, առ դրունս ելէք եւ աղօթեցէք»... երախաները (չմկրտուածները) եւ ապաշխարողները տաճարէն կ'ելլէին դէպի գաւիթ:



ԽԱՉՎԵՐԱՑը Հայ Եկեղեցւոյ հինգ տաղաւարներէն վերջինն է: Ան Խաչին նուիրուած տօներուն մէջ ամենակարևորն է, որովհետև նուիրուած է խաչին գերութիւնէն վերադարձին, անոր բարձրացման և փառաբանութեան պատմական յիշատակին: Հայաստանեայց Եկեղեցին Խաչվերացը կը տօնէ Սեպտեմբերի 11-17 ժամանակահատուածին հանդիպող Կիրակի օրը, իսկ տօնի յաջորդ օրը մեռելոց է:

610 թ. պարսից Խոսրով արքան մեծաքանակ զօրքով կը յարձակի Բիզանդական կայսրութեան վրայ: Սկզբնական յաջողութիւններէն ոգևորուած՝ պարսկական զօրքերը 614 թ. կը մտնեն Երուսաղէմ: Շատերը կը սպաննեն եւ շատերն ալ գերի կը վերցնեն: Վերջիններուն մէջ էր նաև Երուսաղէմի Չաքարիա հայրապետը: Բայց պարսիկներն այսքանով չեն բաւարարուիր. կը մտնեն Ս. Յարութեան տաճար և գերի կը վերցնեն այն տեղ պահուող Աստուածընկալ Ս. Խաչը, որը Դ դարի սկզբին Կոստանդիանոս կայսեր մօր Հելինէի ձեռքով գտնուէր և պաշտամունքի առարկայ էր դարձեր բոլոր քրիստոնէաներու համար:

628 թ. Բիզանդական զօրքերը Հերակլ կայսեր գլխաւորութեամբ խաչափայտը վերադարձնելու համար կը պատերազմին պարսիկներու դէմ: Բիզանդական զօրքին կ'օժանդակէ նաև հայկական զօրախումբը ՄԺԺ Գնունիի գլխաւորութեամբ: Տիրոջ օգնութեամբ Բիզանդացիները յաղթանակ կը տանին:

Ս. Խաչը հանդիսաւոր թափօրով կը տեղափոխուի հայոց Կարին քաղաքը: Իսկ Կարինէն զայն կը տեղափոխեն Կ. Պոլիս, ապա Երուսաղէմ: Գերեզարձի ճանապարհին Տիրոջ խաչափայտը կը բարձրացուէր և ցնծութեան առիթ կ'ըլլար ժողովուրդին համար:

Խաչը քրիստոնէաներու համար Աստուծոյ զօրութիւնն է ու պարծանքներու պարծանքը, որուն վրայ իր անմեղ արիւնը թափեց Քրիստոս, տալով մեզ յաղթութեան զէնքը ընդդէմ սատանային ու անոր խաբկանքներուն: Յիսուս խաչին վրայ ցոյց տուաւ իր անհուն սէրը մարդկութեան հանդէպ, և խաչը դարձաւ մեզի համար յոյսի, սիրոյ և փրկութեան երաշխիք:

Սուրբ Գէորգ Զօրավար

Խաչվերացէն 13 օրեր ետք եկող շաբաթ օրը Ս. Գէորգ է: Ան նահատակուած է Նիկոմեդիոյ մէջ մօտաւորապէս 303 թուականին:

Հասակ առած է քրիստոնէայ ընտանիքի մէջ: Երբ Հռոմէացի Դիոկղետիանոս կայսրը (284 - 305) հրովարտակ կը հրատարակէ քրիստոնէաներուն դէմ, Գէորգ զօրավարը կը պատռէ Նիկոմեդիա քաղաքի հրապարակին վրայ կախուած այս արքունական հրամանը:

Այս պատճառով կը չարչարուի եւ կը նահատակուի, որովհետեւ կը մերժէ ուրանալ իր քրիստոնէութիւնը:

Բազմաթիւ աւանդութիւններ հիւսուած են Ս. Գէորգի մասին: Ասոնցմէ ամենածանօթը այն է որ Գէորգը վիշապ մը սպաննելով կոյս մը ազատած է եւ այդ պատճառով կ'ընդունուի որպէս վիշապասպան սուրբ:



Անգլիացիները իրենց պահապան սուրբը կը համարեն Ս. Գէորգը (Saint George): Սուրբ Գէորգի անունով եկեղեցիներ ունին Հայերը եւ եւրոպական ժողովուրդները:

ՆԻԿԻՅ ՃՈՂՈՎ Արիոս Աղեքսանդրացի, իմաստասիրական հմտութեամբ ծանօթ անձ մըն էր, որ մինչեւ իսկ հայրապետութեան յաջորդելու փափաքեցաւ: Այն ժամանակ Յիսուսի անձին վրայ խնդիրներ կային եւ Արիոս ալ սկսաւ պաշտպանել այն տեսակետը թէ Յիսուս Քրիստոս չէ մարդացեալ Որդին Աստուծոյ, այլ գերագոյն արարած մը, եւ թէ իրեն տրուած Որդի Աստուծոյ կոչումը բառացի իմաստով առնելու չէ: Աղեքսանդր հայրապետ Աղեքսանդրիոյ գաւառական ժողովներու մէջ, 312-ին եւ 319-ին, հերքեց Արիոս երեցին կարծիքը, որ սակայն իրեն պաշտպան եպիսկոպոսներ ալ ունեցաւ եւ Եւսեբիոս արքեպիսկոպոսը Նիկոմիդիոյ մէջ տեղի ունեցած ուրիշ ժողովով մը արձակեց Արիոսը Աղեքսանդրիոյ ժողովներուն դատապարտութենէն: Երբ որ վեճերը ընդհանրացան եւ եկեղեցոյ մէջ հակառակութիւնները սաստկացան, Կոստանդիանոս կայսրը ուզեց խնդիրը ընդհանուր ժողովի մը մէջ լուծել եւ բոլոր քրիստոնէայ աշխարհի եպիսկոպոսները հրաւիրեց Նիկիա քաղաքը 325-ին, ուր ժողովը բացուեցաւ Յունիս 19-ին: Հրաւիրուած էին նաեւ Տրդատ եւ Գրիգոր որոնք կամ չուզեցին, կամ չկրնալով անձամբ երթալ, Արիստակետը իրենց փոխանորդ նշանակեցին, եւ իրենց կարծիքին ու դաւանութեան յայտարարութիւնն ալ գրաւոր յանձնեցին անոր եւ ճամբայ հանեցին (ԽՈՐ. 176): Արիստակետ եղաւ Նիկիոյ 318 հայրապետներէն մին, որոնք միայն քանի մը հոգիի տարաձայնութեամբ, Արիոսական վարդապետութիւնը դատապարտեցին եւ Արիոսը նզովեցին: Կոստանդիանոս ալ զայն արքայապետեց: Նիկիոյ ժողովին մասնակցած հայրապետներու անուանացանկին մէջ կը կարդացուի Հայոց Մեծաց Արիստարքոս կամ Արիստակիսոս կամ Արսափիոս անունով եպիսկոպոսը, որ մեր Արիստակետն է, թէպէտ օրինակ օրինակ անունը աղաւաղուած է: Յատուկ գործունէութեան կամ բանախօսութեան յիշատակ մը չունինք, բայց արդէն այնչափ եպիսկոպոսներուն մէջէն միայն քանի մը պայքարողներու անունները կը տեսնուին ժողովի ատենագրութեանց մէջ: Արիստակետ ժողովէն ուղղակի վերադարձաւ Վաղարշապատ արժանահաւատ բանիւ, եւ քսան կանոնեալ գլխովը ժողովոյն (ԽՈՐ. 177): Գրիգոր ուղղափառ հաւատքի յաղթանակին վրայ ուրախանալով ընդունեց եւ հռչակեց Նիկիոյ կանոնները, «եւ սուղ ինչ գլուխս յինքենէ ի կանոնս ժողովոյն յաւելու» (ԽՈՐ. 177):

Մաս տուողը կ'ըսէ. «Մասն եւ բաժին եղիցի Սուրբ Պատարագիս»
 Մաս ստացողը կ'ըսէ. «Բաժին իմ Աստուած Յաւիտեան»

Նաւակատիք (նոր կերտել, նոր շինել) նորաշէն տաճարի, եկեղեցոյ, ամէն նորի բացման, տարեդարձի ու նուիրագործութեան հանդէս: Նաւակատիք է նոր աւարտած եկեղեցոյ առաջին նուիրագործութիւնը, ինչպէս նաեւ՝ նուիրագործութեան տարեդարձը: Հայ եկեղեցին նաւակատիքները սկսած է կատարել կամ յիշատակել մեծահանդէս տօներու նախընթաց օրերուն: Նաւակատիքով պահքի խստութիւնը կը մեղմացուի՝ առանց զայն ամբողջովին վերացնելու, այսինքն՝ մտեղէնը խստիւ արգիլելով՝ կը ներուի ձկնեղէնի ու կաթնեղէնի կիրառութիւնը Պատարագի մատուցումէն ետք:

Այդպէս է նաև Հայ եկեղեցոյ հինգ տաղաւար տօներու նախընթաց օրերուն: Այսինքն՝ Վարդավառի, Աստուածածնի Վերափոխման ու Խաչվերացի նախընթաց շաբաթ օրերուն, առաւօտեան Պատարագէն ետք, իսկ Ս. Ծննդեան ու Ս. Զատիկի ճրագալոյցներուն, երեկոյեան Պատարագէն յետոյ կաթնեղէն ու ձկնեղէն գործածելը նոյնպէս Նաւակատիք կը նշանակէ:

Նաւակատիքը իբրև առանձին տօն կը նշուի Խաչվերացի տօնի նախընթաց շաբաթ օրը, 4-րդ դ. բիզանդական կայսրուհի Հելիսիի նախաձեռնութեամբ Երուսաղէմի Սուրբ Յարութեան մեծ տաճարը շինուելէն ետք զայն նուիրագործելու և օծելու տարեդարձի օրը, որ ամբողջ քրիստոնէայ աշխարհի համար կարելոր յիշատակ է:

Պահուած բառ

լ	ն	ւ	ս	ա	ւ	ն	ր	չ	ա	կ	ա	ն
ն	գ	ք	ա	ն	ա	կ	ա	դ	ն	ա	ւ	ա
ւ	ե	ն	կ	օ	է	կ	ի	դ	ն	թ	ա	կ
ս	ւ	ա	ն	տ	է	ր	պ	ա	տ	ն	դ	ա
ա	ն	վ	ե	հ	ա	փ	ա	ռ	ա	լ	օ	ք
ւ	ր	ե	ճ	ա	կ	ա	տ	ի	ճ	ի	թ	ն
ն	ի	ր	ա	կ	ա	ն	ր	պ	ա	կ	ա	դ
ր	չ	ա	ր	ե	ն	ց	ի	ր	ր	օ	ր	ն
ե	կ	ե	դ	ե	ց	ի	ա	ք	ի	ր	ա	բ
լ	ս	ա	ր	ա	ն	օ	ր	ր	ա	ն	ն	ն
ե	կ	ե	դ	ե	ց	ի	ք	ն	ւ	ր	մ	ս
լ	ե	շ	ն	ր	ն	ա	բ	ե	դ	ա	յ	ն
ն	ն	ա	պ	ա	տ	ն	ւ	ե	լ	ի	ք	ր
լ	ա	ն	ա	մ	ի	ք	ա	հ	ա	ն	ա	յ

աւանդական	աղօթարան	արեղայ	անտէր
բողոքական	բոսոր	բարիք	
եկեղեցի	եկեղեցի		
էական	իրական	իմանալ	
լուսաւորչական	լուսաւորել	լսարան	
կաթոլիկ	կաթողիկէ	կապ	
ճար	ճակատ	ճիտ	
ոգելորիչ	որոշել		
չարենց			
պատուելի	պատրիարք	պատ	
վեհափառ	վեր	վանք	
տաճար	տապան	տօն	
քահանայ	քուրմ	քանակ	օրրան

պահուած բառ՝ 5 գիրերով. հաւատք

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն



Ամբողջացո՛ւր Հայաստանեայց Եկեղեցւոյ
Կիրակնօրեայ Դպրոցներու նշանաբանը: Մարկոս 10.14

Յիսուս, մանուկները, արգելք, այդպիսիներուն,
արքայութիւնը

----- ըսաւ.

«Ձգեցէք որ ----- ինծի գան, ----- մի՛
ըլլաք անոնց, որովհետեւ ----- է Աստուծոյ
-----»:

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Ա., Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Ո՞ր տարին հիմնուեցան «Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցները».
ա. 1900
բ. 1929
գ. 1979
դ. 1980

2.- Ո՞ր տարին հիմնուեցաւ Սոնթթէալի Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցը.
ա. 1900
բ. 1929
գ. 1979
դ. 1980

3.- Այս տարի «Մաշտոցի Արձագանգ»ի քանի՞ երորդ տարեդարձն է:
ա. 6
բ. 32
գ. 17
դ. 25

4.- Աստուածաշունչը կը բաղկանայ երկու մասերէ. առաջին մասը կը կոչուի «--- Կտակարան» իսկ երկրորդը՝ «Նոր -----»: Առաջին մասը գրուած է Քրիստոսէ --- -- իսկ երկրորդը ----- էտք:

5.- Ի՞նչ կը կոչուի այն տաղաւարը որ կը սօնենք Սեպտեմբեր ամսուան ընթացքին.
ա. Խաչվերաց
բ. Սուրբ Ծնունդ
գ. Սուրբ Զատիկ
դ. Սուրբ Աստուածածնի Վերափոխում:

6.- Հետեւեալ սուրբերէն որո՞ւն սօնը կը սօնենք Սեպտեմբերին.
ա. Սուրբ Սարգիս
բ. Սուրբ Գեորգ
գ. Սուրբ Թադէոս
դ. Սուրբ Պետրոս:

7.- Ի՞նչ կը կոչուի խաչին կեդրոնական մասը.
-----:

8.- Յիսուս քանի՞ տարեկան էր երբ մկրտուեցաւ.
ա. 6
բ. 32
գ. 30
դ. 33:

9.- Ամբողջացո՛ւր Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու Սաղթերգին առաջին 4 տողերը.
Կիրակնօրեայ Սուրբ յարկին մենք ----- ենք լուսաբաղձ Կայծերու պէս ----- Ցայտած՝ սրտէն պերճ -----:

10.- Ամբողջացո՛ւր Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու Սաղթերգին երկրորդ 4 տողերը.

Ուստի քայլենք -----,
Ո՛վ հարազատ զարմ -----
----- գընացքով
Լոյս-աղբիւրին -----:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ., Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1.- Ո՞վ է ներկայիս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը.

- ա. Սահակ Բ. Խապայեան
- բ. Արամ Ա.
- գ. Գարեգին Ա.
- դ. Գարեգին Բ.:

2.- Ո՞վ է ներկայիս Ամենայն Հայոց Կաթողիկոսը.

- ա. Սահակ Բ. Խապայեան
- բ. Արամ Ա.
- գ. Գարեգին Ա.
- դ. Գարեգին Բ.:

3.- Ըստ Ա. Կորնթացիներուն 13րդ գլուխին երեք հիմնական շնորհներն են Հաւատք, Յոյս եւ Սէր, եւ այս երեքէն ամենէն մեծն է...

- ա. հաւատքը
- բ. յոյսը
- գ. սէրը
- դ. Աստուածային հիմնական շնորհները թիւով 4 են:

4.- Վերջին ընթրիքի ընթացքին Յիսուս հաստատեց Հաղորդութեան խորհուրդը: Աւագ շաբթուան ո ը օրն էր այդ.

- ա. Երկուշաբթի
- բ. Ուրբաթ
- գ. Հինգշաբթի
- դ. Չորեքշաբթի:

5.- Սուրբ Ծնունդի մաղթանքն է.- Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, օրհնեալ է...

- ա. Քրիստոսի Ծնունդը
- բ. Յայտնութիւնը Քրիստոսի
- գ. Յարութիւնը Քրիստոսի
- դ. Անունը Քրիստոսի:

6.- Պատարագի ընթացքին ո՞վ (որո՞նք) կ'երգէ (կ'երգեն) «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ...».

- ա. Պատարագիչը
- բ. Սարկաւազը
- գ. Քահանան
- դ. Դպիրները:

7.- Ս. Պատարագի ընթացքին Ողջոյն տուողը կ'ըսէ: «Քրիստոս - մէջ --- յայտնեցաւ»:

8.- Ս. Պատարագի ընթացքին ողջոյն ստացողը կը պատասխանէ. «----- է ----- Քրիստոսի»:

9.- Հինգ տաղաւարներն են.-Ս. Ծնունդ, Ս. Զատիկ, Այլակերպութիւն, Վերափոխումն Ս. Աստուածածնի եւ

-
- ա. Մեռելոց
 - բ. Խաչվերաց
 - գ. Ծաղկազարդ
 - դ. Համբարձում:

10.- Ս. Զատիկէն 40 օրեր ետք կը տօնենք.

- ա. Համբարձում
- բ. Երեւում
- գ. Այլակերպութիւն
- դ. Յայտնութիւն:

Ո՞րն է ճիշդ պատասխանը Երկրորդականի անկիւն

Ամբողջացո՛ւր:

1.- ----- կը կոչուի եկեղեցոյ արեւմտեան բաժինը որ տաճարէն բաժնուած է պատով ու դուռով, որուն մէջ կը կենային ապաշխարողները որոնք պատրաստ չէին հաղորդութիւն ստանալու:

2.- 325 թուականի Նիկիոյ ժողովին Հայաստանեայց եկեղեցոյ ներկայացուցիչն էր, ----- ր՝ Գրիգոր Լուսաւորչի որդին:

3.- 325 թուականին գումարուած Նիկիոյ ժողովին մասնակցեցան - - - հայրապետներ (կամ անոնց ներկայացուցիչները):

4.- Առաջին տիեզերական ժողովը տեղի ունեցաւ ----- մէջ, --- թուականին :

5.- Խաչվերացը կը տօնենք Սեպտեմբեր - - ի ամենէն մօտ գուգադիպող Կիրակի օրը:

6.- Հայաստանեայց եկեղեցոյ խաչի տօներն են.

- ա. ---- խաչի
- բ. ----- խաչ
- գ. ----- խաչ
- դ. Խ -----:

7.- Խաչվերացէն 13 օրեր ետք Ս. ----- ին տօնն է, եւ յաջորդ օրը ----- Սուրբ Խաչ է:

8.- Ըսէ՛ մէկ բառովդ նոր կերտել, նոր շինել

9.- Ամբողջացո՛ւր: Խաչվերացին օրը, ռեհանով զարդարուած խաչով տեղի կ'ունենայ -----:

10.- Ամբողջացո՛ւր. Հայաստանեայց Եկեղեցոյ սովորութիւններէն է Խաչվերացի տօնին օրինել զանազան -----:

11.- Ո՞վ գրած է:
«Գալով ինձի քաւ լիցի եթէ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն զատ ուրիշ բանով պարծենամ»:

- ա. Ս. Պօղոս Առաքեալ
- բ. Ս. Պետրոս Առաքեալ
- գ. Ս. Յովհաննէս Առաքեալ
- դ. Ս. Թադէոս Առաքեալ

12.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Ս. Կոյս Մարիամի ծննդեան տօնը.

- ա. Սեպտեմբեր 8
- բ. Օգոստոս 8
- գ. Յունուար 8
- դ. Հոկտեմբեր 8:

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻՆ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍԸ



Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցույ Կիրակնօրեան իր 37-րդ տարեշրջանը բոլորեց: Կիրակի, 21 Մայիս 2017-ի յետմիջօրէին, Ս. Յակոբ Վարժարանի «Բաստրմաճեան» սրահին մէջ տեղի ունեցաւ ամավերջի հանդէսը՝ ի ներկայութեան հայ հոգեւոր արժէքներուն գիտակից ծնողներու, Հոգաբարձութեան անդամներու, Ազգային Երեսփոխաններու, եւ Գանատայի Հայոց Թեմին առաջնորդ՝ Գերշ. Տէր Բարգէն Սրբ. Արք. Չարեանի:

Ըստ մեր Կիրակնօրեայի աւանդութեան՝ հանդիսասրահի մուտքին ներկաներուն բաժնուեցաւ «Մաշտոցի Արձագանգ» պարբերականի գունաւոր ու պատկերազարդ տարեկան բացառիկը, որ նաեւ կ'ընդգրկէր 2016-17 տարեշրջանի տեղեկագիրը:

Ամփոփ եւ յաջող յայտագիր մը պատրաստուած էր: Աշակերտներ եւ ժողովուրդը յոտնկայս երգեցին Տէրունական աղօթքը: Ապա աշակերտները դարձեալ յոտնկայս աղօթեցին Ներսէս Շնորհալիի «Իմաստութիւն Հօր, Յիսուս»ը ու երգեցին Կիրակնօրեայի քայլերգը:

Բացման խօսքը ներկայացուեցաւ տնօրէնի օգնական՝ Սեւակ Պապիկեանին կողմէ: Ան իր խօսքին մէջ ըսաւ.

«Արդարեւ, 1929-ին Մեծի Տանն Կիլիկիոյ տարագիր Կաթողիկոսը Նորին Սուրբ Օծութիւն Տէր Տէր Սահակ Բ. Խապայեանը հիմը կը դնէր Հայաստանեայց Եկեղեցույ Կիրակնօրեայ Դպրոցներուն որպէս նպատակ ունենալով.

Ա. Հայաստանեայց Եկեղեցույ դաւանութեան եւ աւանդութեան համաձայն կրօնական դաստիարակութիւն տալ մասնաւորապէս մանուկներուն եւ պատանիներուն, իբրեւ լրացուցիչ մասը ազգային ընդհանուր կրթութեան եւ դաստիարակութեան, եւ ընդհանրապէս ալ չափահասներուն աւանդել քրիստոնէութեան եւ Մայրենի Եկեղեցույ վերաբերեալ գիտելիքներ եւ ծանօթութիւններ:

Բ. Այս դաստիարակութեան նպատակն է Հայ ժողովուրդին զաւակները գիտակից



դարձնել իրենց Քրիստոնեական Կրօնքին եւ Մայրենի Եկեղեցւոյն եւ կերտել անոնց քաղաքացիական նկարագիրը:

Արդարեւ, նոյն նպատակով է որ 1980-ին կը հիմնուէր մեր Սուրբ Յակոբ Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցը: Եւ այսօր 37-րդ յաջորդական տարեշրջանը կը հասցնենք իր աւարտին ...», եւ աւարտեց իր խօսքը ըսելով.

«Այս տարեշրջանին (2016-17) մենք շաղկապեցինք Ծառայութեան եւ Վերանորոգումի տարիները: Այս առիթով, մեր այս տարեշրջանին վերջին օրը, փոքր յայտագիր մը պատրաստած ենք ձեզի համար եւ որուն ընդմէջէն կրնանք փոխանակել Ձեզի, թէ մենք ալ կը շարունակենք մեր Ծառայութիւնը բերել մեր Եկեղեցւոյ եւ մեր Ազգին եւ մեր ալ Դպրոցին վերանորոգումի գործընթացը արդէն իսկ ճամբու մէջ է» :



Յայտագրի առաջին բաժինով Մանկապարտեզի աշակերտները արտասանեցին «Տէր իմ Աստուած...» աղօթքը (Օրիորդ Թամար Գիզիրեանը աշխատեցաւ Մանկապարտեզի աշակերտներուն հետ):

Նախակրթարան Ա. Եւ Բ. Դասարաններու աշակերտները ներկայացուցին «Բարի հրեշտակ» երգը, ապա արտասանեցին

հատուածներ «Եկեղեցին Հայկական» բանաստեղծութենէն ինչպէս նաեւ «Առաւօտ լուսոյ» աղօթքէն 4 տուներ: (Տիկին Թալին Բարսեղեանը աշակերտներուն հետ աշխատելով պատրաստած էր այս բաժինը:)



Ապա, Կիրակնօրեայ Դպրոցի Երգչախումբը, ղեկավարութեամբ երգեցողութեան ուսուցչուհի Ընդհանրապարտեզի Բարամինասեանի



եւ դաշնակի ընկերակցութեամբ Բասգալ Տեմերճեանի, ներկայացուց 4 շարականներ՝ «Սուրբ Աստուած»ը, «Արեգակն արդարութեան»ըը, «Նայեաց սիրով»ը, եւ «Նոր Ծաղիկ»ը ինչպէս նաեւ 2 երգեր «Խաչին զինուոր» եւ «Եկեղեցին հայկական»ը:

ը



Նախակրթարանի Գ. և Դ. դասարաններու աշակերտները ներկայացուցին «Յիսուսերգ»ը (Օրդ. Յասմիկ Նաճարեան աշխատելով աշակերտներուն հետ պատրաստած էր այս բաժինը):

Ապա Նախակրթարանի Ե. և Զ. դասարաններու աշակերտները ներկայացուցին «Միրտ ու Տորեն» բանաստեղծութիւնը, որուն յաջորդեց «Հաւատամք»ի արտասանութիւնը:



Ապա՝ Երկր. Բ. և Գ. դասարաններու աշակերտները արտասանեցին Միրոյ Գլուխը (Ա. Կորնթացիս 13):



Տնօրենը՝ Պրն. Թորոս Պապիկեան՝ իր խօսքին ընդմեջէն յիշեցուց թէ գաղութի մը մէջ գործող Կիրակնօրեայ Դպրոցի մը առաքելութիւնը յաջողած կը համարուի այն ատեն միայն, երբ այդ գաղութին մէջ ծնող մանուկները թրծուելով Կիրակնօրեայ Դպրոցին մէջ հասակ կ'առնեն եւ կը սկսին ըլլալ տնօրէն եւ դաստիարակներ: Ապա անդրադարձաւ երկրորդականի աշակերտներուն յանձնառութեան, որ ապագայի համար յոյս կը ներշնչէ: Ան շնորհակալութիւն յայտնեց ուսուցչական կազմին, հոգաբարձութեան եւ ծնողներուն որոնց բոլորին ներդրումով էր որ Կիրակնօրեայ Դպրոցը կրնար իր առաքելութիւնը շարունակել:

Տնօրէնի խօսքին յաջորդեց

վկայականներու քաջախումբ, որուն ընթացքին, Նախակրթարանի Ջ. կարգէն վկայուեցան Փաթիլ Գամիլեան, Սարին Խշիշեան եւ Թամար Խշիշեան, իսկ Երկրորդական Ե. դասարանէն Սդեֆան Տեմիրճեան որոնք իրենց վկայականները ստացան ձեռամբ Առաջնորդ հօր՝ Տէր Բարգէն Սրբ. Արք. Չարեանի:



Ապա 2016-17 Երկր. Ե. կարգի աւարտական՝ Սդեֆան Տեմիրճեանը ուղղեց իր խօսքը, եւ հանդէպ



աւարտեցաւ Սրբազան հօր փակման խօսքով եւ աղօթքով որմէ ետք աշակերտներ եւ ներկաներ երգեցին «Կիլիկիա» մաղթերգը:

Հանդէսի աւարտին ներկաները հիւրասիրուեցան անուշեղէններով որոնք պատրաստուած էին ծնողներու կողմէ:



Աշակերտները բաժնուեցան Սեպտեմբերի վերամուտին դարձեալ հանդիպելու յոյսով:

Սուրբ Յակոբ Կիրակնորեայ Դպրոցի 2016-17 տարեշրջանի Երկր. Ե. կարգի աւարտական Սդեֆան Տեմիրճեանի խօսքը արտասանուած Ամավերջի Հանդէսին Կիրակի 21 Մայիս 2017:

Գերաշնորհ Տէր Բարգէն Սրբազան Արքեպիսկոպոս Չարեան, Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմի,

Մեծայարգ տիարք Սագո Եաղճեան, եւ Նորայր Պեզճեան ներկայացուցիչներ Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Հոգաբարձութեան

Ազնուափայլ Տիկ. Անի Գոյումճեան ներկայացուցիչ Սոնթրեալի Հայ Օգնութեան Միութեան «Սօսէ» մասնաճիւղի վարչութեան

Սիրելի Տնօրէնութիւն, Ուսուցչական կազմ, աշակերտներ, ծնողք եւ բարեկամներ Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնորեայ Դպրոցի:

Այսօր, երբ վերջին անգամ ըլլալով որպէս Կիրակնորեայ Դպրոցի աշակերտ առիթը կը տրուի ինձի իմ խօսքս ուղելու ձեզի, նախ եւ առաջ կ'ուզեմ սրտագին շնորհակալութիւն յայտնել տնօրէնութեան եւ ամբողջ ուսուցչական կազմին, անցեալի եւ ներկայի, որոնք, մեծ համբերութեամբ եւ յարատեւ ջանքով, դասաւանդեցին եւ կը շարունակեն դասաւանդել տալով թէ ինձի եւ թէ բոլոր աշակերտներուն կրօնական դաստիարակութիւն Կիրակիէ Կիրակի:

Վերջին 8 տարիներուն յաճախած եմ Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցւոյ Կիրակնորեայ Դպրոցը, եւ շատ ուրախ եմ որ այսօր կ'աւարտեմ այս դպրոցը: Կիրակնորեայ Դպրոցին շնորհիւ է որ շատ մօտեցայ մեր Աստուածաշունչի երկու կտակարաններուն, փոքր տարիքէ լսելով պատմութիւններ այդ երկու հատուածներէն եւ ստանալով աւելի մանրամասն բացատրութիւն աւելի բարձր դասարաններու մէջ: Նաեւ, փոքր տարիքէ առիթը ունեցեր եմ, սորվելու անթիւ աղօթքներ, կարճ եւ երկար, որոնք տակաւին կը յիշեմ եւ երբեք պիտի չմոռնամ:

Մեր Կիրակնորեայ Դպրոցին միջոցաւ է որ մօտեցեր եմ Հայաստանեայց Մայր Եկեղեցւոյ պատմութեան, նայած եմ անոր զանազան ակնարկներով, եւ սորված եմ անոր կարեւոր կէտերը որպէսզի գիտնամ թէ ի՞նչ է յարմար վարուելակերպը՝ Հայ Քրիստոնէայի մը համար: Բոլոր այս դասերը ներշնչած են, լաւագոյնս փորձել ապրելու համար Հայ Քրիստոնէայի պատշաճ կեանք մը:

Վերջին երկու տարիներուն ընթացքին, առիթը ունեցայ որպէս օգնական իմ ծառայութիւնս բերելու մեր Կիրակնորեայ Դպրոցէն ներս: Այս օգնականի տարիները ինձի առիթ մը տուին առաւել եւս մանրամասնօրէն սերտելու Աստուածաշունչը, Հայ Եկեղեցին, Ընդհանրական Ժողովները, 7 խորհուրդները, 7 առաքիւնութիւնները, եւ 7 մոլութիւնները եւ ընդհանրապէս Հայ Եկեղեցւոյ պատմութեան անցեալն ու ներկան եւ կազմաւորուելու որպէս գիտակից Հայ Քրիստոնէայ:

Վերջապէս՝ կ'ուզեմ ըսել թէ նոյնիսկ երբ այսօր կ'աւարտեմ Կիրակնորեայ Դպրոցը, որոշած եմ յառաջիկայ տարիներուն ընթացքին շարունակել իմ ծառայութիւնս այս հաստատութենէն ներս՝ որպէս ուսուցիչ կամ օգնական: Լաւագոյնը կը մաղթեմ մեր Կիրակնորեայ Դպրոցին:

Շնորհակալութիւն:

2017-18 Տարեշրջան (38-րդ)

Վերամուտ`

Կիրակի 17 Սեպտեմբեր, 2017 ժամը 10:30

Մանկապարտեզ : Ա., Բ., և Գ. Դասարաններ (3 - 5 տարեկան)
Նախակրթարան : Ա., Բ., Գ., Դ., Ե. և Զ. Դասարաններ (6 - 11 տարեկան)
Երկրորդական : Ա., Բ., Գ., Դ. և Ե. Դասարաններ (12 - 16 տարեկան)

Գործունեություն`

Ամեն Կիրակի Ժամը 10:30 – 13:00

Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել Տնօրէնին`

Թորոս Պապիկեան

Հեռ. (514)-956-1277 email director@sourphagop.org

Կայքէջ`

www.sourphagop.org

17-րդ տարի

Ամսաթերթ`

«Մաշտոցի Արձագանգ»

www.sourphagop.org/mashdots

25-րդ տարի